

ցեղին պատիւը աւելի պայծառացուցին :

Պեղծիայի թագաւորը իրեն քաղաքական իշխանութիւնն օրէ օր աւելի ամրացնելէն ետքը՝ յայտնի ըրաւ թէ իր երկրին մէկ հատիկ օգուտը հոգալու, այսինքն արհեստներն ու վաճառականութիւնը ծաղկեցնելու հետ է. և աս վախճանիս համար երկրթէ ճամբաներով լեցուեցաւ բոլոր Պեղծիան :

Հոլանտայի թագաւորը Վուլիէլմոս Փրիդերիկոս, որ անցած դեկտեմբերին մէջ վախճանեցաւ, մեծցաւ տուաւ իր սիրելի հպատակներուն սրտին. բայց անոնց անխոնջ աշխատասիրութիւնը՝ որով տէրութեան գանձին և տուրքերուն բարեկարգութեանը համար կ'աշխատին՝ ամենեւին չպակսեցաւ :

Հռոմայ տէրութեանը մէջ նորէն ապստամբութեան ու խռովութեան ձայներ ելան, բայց ծանր հետեանք մը չերեցաւ : Մատրիացւոց խաղաղարար ու խոհեմ օգնականութիւնը Խալիայի մանր տէրութեան հանգըստութեանը մեծ ամբողջութիւն է :

Շուեդներուն իրենց Վարոլոս Յովհաննէս թագաւորին քսանըհինգ տարուան թագաւորութեանը յոբելեան հանդէսները կատարելով՝ յայտնի ըրին թէ անցեալ տարի ալ գոհ եղած են իրենց քաղաքական ու նիւթական յառաջադիմութեանը վրայ :

Վերմանիային վերաբերեալ խընդիրներուն մէջ այնչափ էր անցեալ տարի ալ Մատրիայի և Բրուսիայի միաբանութիւնն, որ բոլոր Վերմանիան յիրաւի իբրեւ մէկ ազգ և մէկ տէրութիւն առաջ երթալու վրայ է, մանաւանդ ուսմանց՝ գիտութեանց և արուեստից մէջ : Դանր է Վերմանիային ընթացքը և հանդարտ, բայց միանգամայն աւելի հաստատուն ու տևական ալ է՝ քան թէ Լաւոպայի ուրիշ որ և իցէ տէրութեանց յառաջադիմութիւնը :

() սմանեան տէրութեան փորձ և

խոհեմ ընթացքը, որով ամէն բանէ աւելի մասնաւոր ջանքով երկրին մէջ արհեստները ծաղկեցնելու, երկրագործութեան աղբիւրը բանալու, ոսկիի և արծրթի հանքերը բանեցնելու, և ստակներուն արժէքը լաւցնելու հետ եղաւ անցեալ տարի, իրաւամբ յոյս կուտայ հպատակներուն թէ օրէ օր աւելի հանգստութեան և ուրախութեան օրեր պիտի տեսնեն :

Մընդհանուր խորհրդածութիւնները մէկ աղօտ լոյս մը կրնան տալ նաև աս 1844 տարուանս մէջ պատահելու դիպուածներուն՝ որ այլ և այլ օրագիրներու մէջ պիտի կարդացուին : Մեր կողմանէ փափաքելին աս է որ աս տարուան ընդհանուր խաղաղութիւնն ալ անցած տարուէնէն վար չմնայ՝ վեր ըլլայ, որպէս զի քաղաքական և ազգային յառաջադիմութիւնները հետ զհետէ ծաղկին ու պայծառանան :

Լաւոպայի հիմակոտն Լափաւորներուն աստիճան :

Շ ՈՒԵՏԻ թագաւորը 80 տարեկան է .

Հռովմայ քահանայապետը 78 .

Մննովերի թագաւորը 73 .

Վաղղիացւոց թագաւորը 70 .

Ս իրթեմպերկի թագաւորը 62 .

Պաւերայի թագաւորը 57 .

Տանիմարբայի թագաւորը 57 .

Սարտենիայի թագաւորը 55 .

Պեղծիայի թագաւորը 54 .

Ստորիննահանգաց թագաւորը 52 .

Մատրիայի կայսրը 50 .

Բրուսիոյ թագաւորը 50 .

Ռուսաց կայսրը 47 .

Սաքսոնիայի թագաւորը 46 .

Նափոլիի թագաւորը 34 .

Յունաց թագաւորը 28 .

Փորթուգալի թագուհին 25 .

Մեքսիկայի թագուհին 24 .

()սմանցոյ թագաւորը 20 .
 Սպանիայի թագուհին (Սզապէլ-
 ւա) 13 :

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆ

Երբեք :

«Եւմանաւանդ սոցունց նման գտցէ որ հրաշալի
 » զողբերգական գաս ... Եւ ի սոցանէ գարձեալ որ
 » զմեծ յաղթանակ գովութեանցն երթեալ տանի՝
 » Եւրիպիդէս ճանաչի ողբերգակ . զի գորովագոյն
 » իմն և գեղեցկայարմար գիւցաղնական ողբեր-
 » գութիքն ուրախացուցեալ զոգիս մոռուողացն ,
 » անջինջ յիշատակաւ ի նոսին և զխրատուցն ար-
 » ձանակեալ անմահարար եթող արժանաւոր յի-
 » շելոյ արուեստ » :

ԽՈՐԵՆ . Ի ԳԻՐՍ ՊԻՏ :

ԽՈՐԵՆԱՅԻՆ զարմանալով մը Սա-
 հակ բազրատունիին ուսումնասէր
 հետաքրքրութեանը վրայ՝ որով Պար-
 սից առասպելներուն վրայ տեղեկու-
 թի խնդրեր էր իրմէ , կ'ըսէ . « Օ ի՞նչ
 » քեզ առ այսօրիկ կարօտութի ա-
 » ռասպելք սուտք , կամ զի՞նչ պէտք
 » անմիտ և անհանձար բանից յարմա-
 » ընք . մի արդեօք յունական պերճ և
 » ողորկ առասպելքն իցեն հանդերձ
 » պատճառաւ , որք զճշմարտութի ի-
 » ըացն այլաբանաբար յինքեանս ու-
 » նին թաքուցեալ : Սխտաբէսալ կ'ի-
 մացուի թէ շատ աղէկ հմտացեր էր
 խորենացին յունական բանաստեղ-
 ծութեց ոճին և իմաստին , և թէ կը
 յորդորէր կամ գէթ իրաւունք կու-
 տար մեր ազգին ուսումնասէրներուն՝
 որ Յունաց ընտիր մատենագրութեք
 հետեւին : Եւ յիրաւի . վասն զի այն-
 չափ է Յունաց հին բանաստեղծնե-
 րուն ընականութիւնը , գեղեցկու-
 թիւնը , ճշգրութիւնը և ազնուու-
 թիւնը , որ ի՞նչ և իցէ ժամանակ օրի-
 նակ եղած են ու պիտի ըլլան կիրթ
 ախորժակի . ուստի փափաքելի բան
 է որ հաւատարիմ ու ընտիր թարգ-
 մանութեամբ մեր ազգն ալ թարգ-
 մանուած ունենայ ձեռքը գոնէ անոնց

գլխաւորներուն գործքերը : Հիմա
 ուրիշներէն զատ՝ Եւրիպիդէսին ալ
 անուանի ողբերգութիւններուն հայե-
 րէն թարգմանութիւնը ունենալով ,
 չենք սպասեր անոնց ամբողջ հրատա-
 րակուելուն , ու մէկ պզտիկ ճաշակը
 օրագրիս մէջ կը գնենք՝ իբրեւ ուսու-
 մնասիրաց հաճոյական բան :

Եւրիպիդէս սաղամինացին Վրիս-
 տոսէ 480 տարի առաջ ծաղկեցաւ
 իբրեւ քաջ ողբերգակ բանաստեղծ ,
 ու Սոփոկլէն վար չմնալու ջանքովը՝
 շատ բանի կողմանէ նաեւ գերազան-
 ցեց անիկայ : Իրաւ է որ Սոփոկլէն
 չափ վսեմէ , բայց անկէ շատ աւելի
 սրտաշարժ է , և գրուածքին ոճը ա-
 ւելի սիրուն ու բնական է : Իրեն ողբ-
 երգութիւններուն մասնաւոր կա-
 տարելութիւնն աս է որ բարոյական
 գեղեցիկ իմաստներով զարդարուած
 են . անոր համար ողբերգակ իմաս-
 տասէր ըսուեցաւ : Բայց երբեմն ան
 փիլիսոփայական վճիռներուն պատ-
 ճառաւ՝ բանաստեղծութեան ուժը
 քիչ մը կը պակսի ու տաքութիւնը
 կը պաղի . ասով Սոփոկլէն վար կը
 մնայ : Եւրիպիդէս ութսուն ողբեր-
 գութիւն շարադրած է կ'ըսեն , թէ-
 պէտ ոմանք հարիւր քսանի չափ ալ
 կը համրեն . ասոնցմէ տասնըինը հա-
 տը միայն կը գտնուին հիմա , անոնց
 մէջ ալ ընտիրներն են Եւրիպիդէս , Ս-
 րէս , Եւրիպիդէս , և Եւրիպի-
 Դէս ըսուած երկու ողբերգութիւնները
 Սեր հոս դրած հատուածը Հերակլէս
 հալէֆին ըսուած ողբերգութեանն է ,
 որուն համառօտ պատմութիւնը կամ
 իմաստը աս է :

Հերակլէս իր կինն ու տղաքը (Թե-
 բէ քաղաքը թողած՝ Եւրոս կ'եր-
 թայ , ու շատ յաղթութիւններ ընե-
 լէն ետքը սանդարամետքը կամ դը-
 ժոխքը կ'իջնայ . հոն երկար ատեն
 ուշանալովը՝ Թեբացիք կը կարծեն
 թէ Հերակլէս մեռած է . ուստի
 խռովութիւն մը կը հանեն , իրենց
 Եւրիպիդէսին (որ Հերակլէսին ա-
 ներն էր) կը սպաննեն , ու տեղը Լիւ-